

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՌՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶՐԱՄԱՏԱԿԱՐՄՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՌՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ.

Քաղ. Երեւան

13 մարտի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոփյանի, Մ. Թոփուլյանի,  
Ա. Խաչադրյանի, Վ. Դովիաննիսյանի, Ռ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,  
Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ փարածքային կառավարման նախարարության ջրային գնդեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի փետրվարի 24-ին սպորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Համայնքային ջրամագրակարարման ծրագիր» փոխառության համաձայնագրում ամրագրված պարբավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դագարան:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՌԴ փարածքային կառավարման նախարարության ջրային գնդեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Վնդրեասյանի գրավոր բացադրությունը, հետագործելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դագարանը **ՊԱՐԶԵՑ.**

1. Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջնորդու «Համայնքային ջրամաքակարարման ծրագիր» փոխառության համաձայնագիրն սպորագրվել է 2012 թվականի փետրվարի 24-ին:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2012թ. մարտի 1-ի թիվ 8 արձանագրային որոշմամբ հավանություն է տվել փոխառության համաձայնագրին:

Համաձայնագրի բաղկացուցիչ մասերն են թվով 3 լրացումները, ինչպես նաև մեկ հավելված, որոնցում համապատասխանաբար ներկայացված են փոխառության միջոցների հաշվին իրականացվելիք ծրագրի նկարագրությունը (այսուհետ՝ Ծրագիր), դրա իրականացումը, փոխառության իիմնական գումարի մարման ժամանակացույցը, ինչպես նաև համաձայնագրում օգտագործված սահմանումները:

Համաձայնագրի նպագրակն է օժանդակել «Հայջրմուղկոյուղու» սպասարկման ընդունակ փարածքներում ջրամաքակարարման որակի եւ առկայության բարելավումը, մասնավորապես՝ Մասիս, Էջմիածին եւ Աշուարակ քաղաքների եւ դրանց հարեւանությամբ գրնվող բնակավայրերի ջրամաքակարարման ցանցերի վերականգնման աշխարհանքների նախագծում եւ վերահսկողություն, առեւտրային կորուսպների կրծագրման նպագրակով ջրաչափերի փոխարինում եւ ջրաչափերի խցիկների գործում, պոմպակայանների եւ ջրամբարների ավտոմատացում եւ այլն (համաձայնագրի 1-ին լրացում):

Վերոհիշյալ նպագրակներով Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) Հայաստանի Հանրապետությանն է (այսուհետ՝ Փոխառու) պրամադրում գրանցում գրանցական դաշտում գումար, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել արժույթի՝ համաձայնագրի 2.07-րդ բաժնի դրույթների համաձայն: Փոխառության միջոցների առհանման կարգը նախագրեաված է համաձայնագրի 2-րդ լրացման 4-րդ բաժնում:

**Փոխառուի կողմից վճարման ենթակա սկզբնական վճարը հավասար է փոխառության գումարի մեկ քառորդ գուկոսին (0.25%):**

Հսկ համաձայնագրի 2-րդ հոդվածի 2.04-րդ կետի՝ Փոխառուի կողմից գուկոսի յուրաքանչյուր ժամանակահարվածի համար վճարման ենթակա գուկոսը պետք է հավասար լինի փոխառության արժույթի համար սահմանված Կողմնորոշիչ դրույքաչափին՝ ավելացրած փոփոխական գործերությունը (variable spread)` պայմանով, որ փոխառության ողջ գումարի կամ դրա մի մասի փոխարկման դեպքում Փոխառուի կողմից փոխարկման ժամանակահարվածում այդ գումարի համար վճարման ենթակա գուկոսը պետք է որոշվի «Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի փոխառությունների ընդհանուր պայմանների» (հասպարված՝ 2010թ. հուլիսի 21-ին) (այսուհետ՝ Ընդհանուր պայմաններ) դրույթների 4-րդ հոդվածի դրույթներին համապատասխան: Ընդ որում, եթե փոխառության առհանված մնացորդի որևէ գումար ժամանակին չի վճարվում, ապա Փոխառուի կողմից վճարման ենթակա գուկոսը հաշվարկվում է Ընդհանուր պայմանների 3.02-րդ բաժնի «ե» կետում սահմանված կարգով:

Հսկ համաձայնագրի վերոհիշյալ հոդվածի 2.05-րդ եւ 2.06-րդ կետերի՝ վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր գործական փետրվարի 1-ը եւ օգոստոսի 1-ը, իսկ փոխառության իմմնական գումարի մարումը պետք է իրականացվի համաձայնագրի 3-րդ լրացմամբ սահմանված ժամանակացույցին համապատասխան:

Համաձայնագրի 2-րդ լրացման 1-ին բաժնի «Ա» մասի 3-րդ կետի «ք» ենթակետի, 4-րդ բաժնի «Ա» մասի աղյուսակի 1-ին կետի համաձայն համապատասխանաբար նախագիծում է, որ Փոխառուն նախագիծի իր գործեկան բյուջեում Ծրագրի իրականացման գրասենյակի այն ֆինանսական պահանջները, որոնք հնարավոր չեն ապահովել այդ գրասենյակի հավաքագրած եկամուտներից, եւ, որ փոխառության միջոցներից կարող են ֆինանսավորվել ծրագրի 1-ին մասի շրջանակներում նախագիծող ապրանքների, աշխատանքների, ոչ խորհրդագրված կամ ծառայությունների, խորհրդագրված կամ ծառայությունների եւ Ծրագրի գործառնական ծախսերի 83%-ը, այսինքն՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է համաֆինանսավորել վերոնշյալ ծախսերի 17%-ը:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ գործում առկա գեղեկանքի համաձայն Հայաստանի Հանրապետությունը համաձայնագրով սպանձնում է ֆինանսական այլ պարտավորություններ:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ադանդում է նաև հետքեւյալ հիմնական պարբավորությունները.

- փոխառության հիմնական գրամարի վճարումն իրականացնել համաձայնագրում ներկայացված մարման ժամանակացույցին համապարասխան,

- Ծրագիրն իրականացնել Ծրագրի իրականացման գրասենյակի միջոցով՝ «Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի փոխառությունների ընդհանուր պայմանների» 5-րդ հոդվածի եւ համաձայնագրի հավելվածը կազմող Ծրագրի, ինչպես նաև համաձայնագրի 2-րդ հավելվածի դրույթներին համապարասխան,

- ապահովել, որպեսզի Ծրագրի իրականացման գրասենյակն իր գործառույթներն իրականացնի այնպես, որ պաշտպանված լինեն Բանկի եւ Փոխառուի շահերը, պրվեն բոլոր այն արդունագրերն ու թույլավորությունները, որոնք անհրաժեշտ են կառավարման միջազգային կապալառուին՝ պայմանագրային գործունեություն իրականացնելու համար, ինչպես նաև, որպեսզի ջրամադրակարարման եւ ջրահեռացման ծառայությունների սակագների չափի կամ կառուցվածքի բոլոր փոփոխություններն իրականացվեն պետքական քաղաքականության եւ իրավական պահանջներին համապարասխան,

- կառավարման կապալառուի հետ գարեւկան կրրվածքով ուսումնասիրել Ծրագրի իրականացման գրասենյակի ֆինանսական վիճակը, ներառյալ եկամուտներն ու ծախսերը նախորդող եւ հաջորդող կիսամյակների համար, նախագետաված ֆինանսական կարարողականը, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել, ներառյալ ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով սակագների բարձրացումը, ինչպես նաև հարկերի հավաքագրման բարելավումն ապահովելու նպագրակով,

- փոխառության միջոցները հասանելի դարձնել Ծրագրի իրականացման գրասենյակի համար՝ այն պայմաններով, որոնք նախագետաված են Փոխառուի եւ Ծրագրի իրականացման գրասենյակի միջեւ կնքված օժանդակ համաձայնագրով (այսուհետ՝ Օժանդակ համաձայնագիր) եւ հասպարված՝ Բանկի կողմից,

- օժանդակ համաձայնագրով սպանձնած պարփակորություններն իրականացնել այնպես, որ պաշտպանվեն Փոխառուի եւ Բանկի շահերը, իրականացվեն փոխառության նպագրակները, չփոխանցվի, չփոփոխվի կամ չեղյալ չփանարվի Օժանդակ համաձայնագիրը կամ դրա որեւէ դրույթ,

- ապահովել, որ Ծրագիրն իրականացվի Հակակոռուպցիոն ուղեցույցի դրույթներին համապարասխան (համաձայնագրի 2-րդ լրացման 1-ին բաժնի մաս «Գ», համաձայնագրի հավելվածի 1-ին կետ),

- Ծրագրի բոլոր միջոցառումների նկարմամբ կիրառել Ծրագրի համար մշակված՝ «Շրջակա միջավայրի կառավարման շրջանակի» չափորոշիչները, քաղաքականությունը, ընթացակարգերն ու մեխանիզմները (համաձայնագրի հավելվածի 10-րդ կետ),

- ապահովել, որպեսզի ընդունված ներդրումները բավարարեն Հնդկայինված կառավարման պայմանագրում սահմանված չափորոշիչները (համաձայնագրի հավելվածի 8-րդ կետ),

- մոնիթորինգի (մշտադիմուման) ենթարկել եւ գնահատել Ծրագրի առաջընթացը եւ պարբառագրել հաշվեդրվություններ՝ Հնդիանուր պայմանների 5.08-րդ բաժնի դրույթներին (համաձայնագրի հավելվածի 12-րդ կետ) համապատասխան եւ Բանկի համար ընդունելի ցուցանիշների հիման վրա,

- վարել կամ հանձնարարել վարել ֆինանսական կառավարման համակարգ՝ Հնդիանուր պայմանների 5.09-րդ բաժնի դրույթներին (համաձայնագրի հավելվածի 12-րդ կետ) համապատասխան,

- պարբառագրել եւ յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից ոչ ուշ, քան քառասունինգ օրվա ընթացքում Բանկ ներկայացնել միջանկյալ, առողջիկ չանցած ֆինանսական հաշվեդրվություններ՝ Բանկի պահանջները բավարարող ձեւով եւ բովանդակությամբ,

- առողջիկի (հաշվեքննության) ենթարկել ֆինանսական հաշվեդրվությունները՝ Հնդիանուր պայմանների 5.09-րդ բաժնի «բ» կետի դրույթների համաձայն,

- ապահովել, որ բացառությամբ Բանկի հետ համաձայնեցված դեպքերի, Ծրագրի իրականացման գրասենյակը չսպանձնի պարբեր, քանի դեռ այդ պարբերի գոյացմանն անմիջապես նախորդող ֆինանսական դաշտավայրը ընթացքում կամ վերջին դաշտավայրը ամսվա ընթացքում Ծրագրի իրականացման գրասենյակի գույք եկամուտներն առնվազն 1,2 անգամ չեն գերազանցել ֆինանսական դաշտավայրը պարբերի սպասարկման համար պահանջվող առավելագույն գումարը՝ ներառյալ վերցվելիք պարբերը (համաձայնագրի 2-րդ լրացման 2-րդ բաժնի մաս «Բ», 4-րդ կետ),

- Ծրագրի համար պահանջվող եւ փոխառության միջոցներից ֆինանսավորման ենթակա բոլոր ապրանքները, աշխատանքները եւ ոչ խորհրդապվական ծառայությունները գնել Գնումների ուղեցույցի (համաձայնագրի հավելվածի 15-րդ կետը) 1-ին բաժնում սահմանված կամ նշված պահանջների եւ համաձայնագրի 3-րդ բաժնի դրույթների համաձայն:

3. Համաձայնագրի 5-րդ հոդվածում նախադեսված են համաձայնագրի ուժի մեջ մփնելու եւ դադարելու վավերապայմաններ: Համաձայնագրի ուժի մեջ մփնելու վերջնաժամկեդը համաձայնագրի անսաթվին հաջորդող հարյուրքսաներորդ (120-րդ) օրն է:

4. Սահմանադրական դադարանը գտնում է, որ համաձայնագրով Հայաստանի Հանրապետության սրանձնած պարբավորությունները բխում են ՀՀ Սահմանադրությամբ պետքության առջև դրված սահմանադրաբավական խնդիրներից:

5. Սահմանադրական դադարանը միաժամանակ նշում է, որ, համաձայն ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցչի կողմից ներկայացված բացաբրության՝ Հայաստանի Հանրապետության համայնքներում վերոհիշյալ բնագավառում իրականացվել են աշխատանքներ, որոնք միշտ առաջանական են եղել.

- Զրամագրակարարման համակարգերի բարելավմանը, վերականգնմանը, նոր զրագծերի կառուցմանը,

- Զրամագրակարարման համակարգի շահագործման համար անհրաժեշտ սարքավորումներով վերագինմանը եւ էլեկտրոնային փակումների համար անհրաժեշտ սարքավորումներում վերագինմանը եւ էլեկտրոնային փակումների համար անհրաժեշտ սարքավորումներում վերագինմանը,

- Խմելու ջրի նկարմամբ բնակչության աճող պահանջների բավարարմանը, ջրի օգբագործման հաշվառման կազմակերպմանը եւ Զրամագրակարարման միջին գետողության երկարացմանը,

- Զրամագրակարարման համակարգի ֆինանսական վիճակի առողջացմանը եւ մասնավոր ներդրողների համար գրավիչ պայմանների սպեհմանը եւ այլն:

Սահմանադրական դադարանն արձանագրում է, որ Զրամագրակարարման եւ Զրահեռացման համակարգի բարելավման ծրագրի նախորդ փուլերում վարկային միջոցների օգբագործման արդյունավետության եւ նոր ֆինանսական պարբավորությունների սրանձնման նպարակահարմարությունը գնահատելիս՝ փոխառության սույն համաձայնագրի վավերացման փուլում անհրաժեշտ է արդեն իսկ սրանձնած պարբավորությունների (վերոհիշյալ աշխատանքների) կագարման արդյունավետության գնահատումը, որը, ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդվածին համապատասխան, ՀՀ Ազգային ժողովի իրավասության խնդիրն է:

Ենելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դադարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանը **ՈՐՈՇԵՑ**.

**1.** 2012 թվականի փետրվարի 24-ին սպորտագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Համայնքային ջրամադրակարարման ծրագիր» փոխառության համաձայնագրում ամրագրված պարբավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

**2.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՆՈՂ**

**Գ. ՇԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 մարտի 2012 թվականի  
ՍԴԸ- 1015